

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբարակացիք դիմում են ուղղակի
Тифлиско-Редакция «Менк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Բագրուի: Նա-
մակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին Լու-
րեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: «Русский Ку-
рьер» լրագրի յօդուած: Չերնոգորիա: Թիւրքիա:
Նամակ Թիւրքիայից: Արտաքին Լուրեր: ՌԱՌՆ
ԼՈՒՐԵՐ: ՀԵՌԱՐԻՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՐՈՒՅ

Յունվարի 30-ին

Հասկանալով թէ ինչպիսի շօշափելի օգուտներ
է տալիս ընթերցանութիւնը մարդուն, եւ ձեռ-
նարկեցի կարողութեանս չափ օգնել իմ շուրջ
պատած մշակներին ընթերցանելի գրքեր հա-
յկայելով նրանց:

Թէն այստեղ կայ մի կիսագրգային և կիսաժո-
ղովրդական գրատուն, որը կարող էր այդ սրբա-
զան պարտքը կատարել, զէթ մերձեցաւ անելով
անդամակցութեան վճարը, այն է 70 կոպէկ և 5
րուբլի գրական, բայց ով էր մինչև այժմ ու-
շադրութիւն դարձնողը մշակ և չքաւոր դասի
վրա, ու որ: Գրատուն զէթ յանձնված է մի քա-
նի պարոններին, որոնց մէջ գտնվում է և պ. Ա-
րամեանը. որքան գիտեմ պ. Արամեանը, կրթե-
լով մի ժողովրդական մարդ է, նա ամեն բան կա-
նէ գրատուն անունը բարձրացնելու համար և մինչև
անգամ ձրի բաց թողնելով գրքերը կարծող աղ-
քատ դասին: Լաւ յիշում եմ ինչպէս մի օր ինձ
հետ հայ տակաւագործների մէջ մտած՝ հրաւի-
րում էինք նրանց մի օր իրանց աշխատանքի օ-
րերից դահն յօգուտ դրատուն, ի հարկէ այդ մի
յայտնի օգուտ կը բերէր գրատունը ժողովրդական
անելու համար. թէն բոլոր հայ տակաւագործները
խոստացան այդ «աղբային մաշիկին» մասնակցել,
բայց չը գիտեմ ինչ պատճառով այդ բանը դուրս
չեկաւ: Սրանից կարելի է եզրակացնել որ հայ
արհեստավորը ունի ձգտում դէպի նորը, դէպի
լուսաւորողը, միայն թէ ունենայ առաջնորդող,
քաջակրող, որոնք ջրած սրտի պիտի խոստովա-
նել, մեր մէջ ընտա չը կան: Տակաւագործներին
խոստացվում էր այնպէսեւ ձրի մուտք գործել
գրատուն, և ձրի գրեմը վերցնել կարգաւ. նը-
րանք թէն ուղարկացած՝ բայց զարմանքով հարց-
նում էին. «միթէ մեզ գրատուն կը թողնեն, որ
մտնենք կարգաւ»:

Բայց ջրած ենք, որ բացի պ. Արամեանը կան
և ուրիշները, որոնք մեր լուսաւորված դասի ներ-
կայացուցիչներ են անտաւանովում. աւելի որոնց
պարտքն է ուշադրութիւն դարձնել հայ արհես-
տավորների և չքաւորների վրա, բայց ոչ, որանք
ստում են հայ լեզուն և արհամարհանքով մի
կողմ են դրում հայոց գրքերը: Բայց կան և կար-
գալ ցանկացողները: Եւ մի օր հարցրի մի պա-
րոնի թէ ինչու այլ եւս գրատուն չէ յանձնում. նա
պատասխանեց թէ «էլ հայերէն գիրք չը կայ»: Ուրեմն
մտում է գրատուն կառավարիչներին, 1) ու-
նենալ դիւրբմտնելի ժողովրդական գրքեր, թէ
տաճիկայ, թէ ռուսաճայ բարբառներով, 2) մը-
ձենալ անել անդամակցութեան վճարը, միայն
աղքատ դասի համար, 3) ընթերցանութեան ժա-
մբը յարմար նշանակել, այն է ձմեռը երկու-
յիսն փափկ 8 1/2 ժամին, իսկ ամառը 8 ժամին,
և ոչ թէ 7 ժամին, երբ 7 ժամին միայն արհես-
տավորները դառնում են գործից: Այդպիսով նը-
րանք լրագրիներին նոր համարներին չէին զրկել:
Յաւալի է նոյնպէս որ աւետարանական հայե-
քը եւ հիմնել են մի գրատուն. հարցնում ենք ուր
մնաց մեր ազգով մի և կրօն ու համոզմունքնե-
րով տարբեր լինելներ, միթէ չէր կարելի այդ
2 գրատունները միացնել, իսկ միութեամբ դը-
ձել յայտնի բան է թէ ինչ օգուտներ կը տար.
մասնաւոր ջրակի է որ աւետարանական հայերի

մէջ կան մի քանի կրօնավոր հասակներ: Ով է
առում սուրբ գրքեր չը լինեն գրաբարանում, բայց
միթէ բացի սուրբ գրքերից հարկաւոր չեն և այլ
ընթերցողութեան գրքերը: Ահա այսպիսի դատն
հանգամանքներն են որ ստիպեցին ինձ ձեռնար-
կել հայերէն ընթերցանութիւնը տարածելու հա-
մար չքաւորների մէջ, միայնակ գործել, քանի
որ ուրիշները մեծ զբաղմունքներ կունենան:

Հնորակալութիւնս յայտնում եմ պ. պ. Ա.
Գրիգորեանին, Ա. Ապրէսիանին. Ն. Յարութի-
նեանին, Ա. Մովսէսեանին և Ա. Քալանթարեա-
նին, որոնք լսելով իմ ձեռնարկութեան մասին,
ուղարկեցին ինձ մի քանի նոր գրքեր, որոնք ու-
ղարկութեամբ կարգացվում են հայ ազգաներից:
Վերջացնելով նամակս յայտնում եմ որ մի օրի-
նակ «Մշակ» էլ ստանում ենք Յարիցինից ձեռ-
ուղարկված գումարով: Յանկալի է որ և ուրիշ
գրքեր, լրագրիներ ու ամսագիրներ մեզ ուղար-
կէին: Մեր հասցէն այս է. Баку Александру
Абелянцъ.

Ալեքսանդր Աբելյանց

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒՆ

Մօգրով, 6 փետրվարի

«Терскія Вѣдомости» լրագրում պ. Ամբրոսե-
վիչ համարումը խօսելով Մօգրովի հայոց ներ-
կայացուցիչների մասին, ասում է որ իբր թէ այդ
ներկայացուցիչները տրված են պ. Ալեքսանդր
և Գանչուանին առաջնորդութեամբ: Բացի այդ
պարոնը ասում է որ աչքի առաջ ունենալով ժո-
ղովրդի դէպի այդ ներկայացուցիչներն ունեցած մեծ
համակրութիւնը, պէտք է կարծել, որ այդ ներկա-
յացուցիչներից նշանաւոր գումար ժողովիցաւ, ուս-
տի և կառավարիչները պէտք է հրապարակական
հաշիւ տալին թէ այդ գումարը բարեգործական
ինչ զանազան նպատակներով է գործադրվել:

Նախ պարտք ենք համարում ասել, որ թաւե-
րաւորաց խումբը ոչ միայն առաջնորդութեամբ չէ
գործել, այլ միայն իր միջից պ. Ս. Մեքրումեան-
ցին ընտրել է նախագահ՝ զերեւ բաժանելու և
այլն: Երկրորդ՝ ինչ վերաբերում է նորան, թէ
նշանաւոր գումար պէտք է հաւաքված լինի, միայն
այդքանը կանանք՝ որ բոլոր տոմարները 183
րուբլու են եղել, ուրեմն և երկու ներկայացուցիչ
մի այդքան նշանաւոր գումար չէր կարող ժողով-
վել: Պարոնը եթէ ցանկանում է աւելի մանրամասն
հաշիւ տեսնել, թող բարեհաճի հայել «Մշակի» №
14 թատերախրայ խմբի նախագահ պ. Ս. Մել-
քումեանցի ստորագրութեամբ տպված հաշիւը:
Խումբը իր պարտականութիւնը կատարած է հա-
մարում՝ ներկայացնելով հաշիւ միմիայն այն հա-
տարակութեամբ, որը յանձնվել է ներկայացուցի-
չներին: Բայց այդ պարտք ենք համարում ասել,
որ ներկայացուցիչներն եղել են ոչ թէ զանազան
բարեգործական նպատակներով, այլ միմիայն մի նը-
պատակով, այն է՝ յօգուտ Մօգրովի հայոց բնմի-
ջներին:

Աւելորդ չենք համարում յայտնել մեր փոխա-
գարձ Հնորակալութիւնը «Терскія Вѣдомости»
թղթակից պ. Ամբրոսեվիչին, նորա դէպի Մօգրո-
վի հայ երկրաւարութիւնը ցոյց տուած մեծ հա-
մակրութեան համար:

«Մշակի» № 14 մէջ տպված թատերախրայ հա-
շիւ մէջ մի սխալ է ստղծւած. խմբի նախագահն ոչ
թէ պ. Մեքրումեանցն է, ինչպէս որ տպված էր,
այլ Ս. Մեքրումեանց:

Խնդրում չիւրեմնապէս այս փոքրիկ նամակը ձեռ-
պատական լրագրի մէջ:

Թատերաւոր

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒՆ

Թիֆլիս, 10 փետրվարի

Մի ընտանեկան հացիկրոյթի ժամանակ, իմ ա-
ռաջարկութեամբ յօգուտ պ. Պօլսի Գալֆայան
որբանոցին ժողովիցաւ ութ րուբլ, որ ներկայ
նամակի հետ ներկայացնելով ձեռ, խնդրում եմ

բարեհաճէք հասուցանել ըստ պատկանելոյն և
ձեռ լրագրի մէջ տպագրել նուիրատուների անուն-
ները, որոնք են. Ն. Մելիք-Փաշայեանց 2 ռ. Ա.
Զ., Անյայտ, Թ. Տէր-Միքայէլեանց, Սարգիս, Խա-
չիկ Աւագեանց և Կ. Օհանեանց, խրաքանչիւրը
մի մի րուբլ:

Ն. Մելիք-Փաշայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՅ պ. Մատթէոս
Տէր-Պետրոսեանից 5 ռուբլ յօգուտ Միացեալ ըն-
կերութեան:

Այսօր տպում ենք մի փոքրիկ նամակ, որով
մեզ ուղարկվում է 8 ռուբլ յօգուտ պ. Պօլսի
Գալֆայան որբանոցին: Ընդամենը ունենք յիշեալ
որբանոցի համար մինչև այժմ հաւաքված 158
րուբլ:

ՆՈՒԽՈՒՅ մեզ գրում են. «Մեր քաղաքային
արդիւնքը այժմ հասնում է մօտ 25,000 ռուբլ
գումարի, բայց դրանից ինչ է ծախսվում նոյն
քաղաքի բարեկաւութեան համար, — համարեա
ոչինչ: Քաղաքային հարկերը տարուց տարի աւել-
ւանում են, բայց քաղաքը մնում է ամեն տարի
նոյն վիճակի մէջ: Կարծում ենք որ այդ բանում
քաղաքի ներկայացուցիչներն են մեղաւոր»:

Մեր ՄՈՍԿՎԱՅԻ թղթակիցը մեզ գրում է:
«Մի քանի ամիս առաջ հաղորդեցաւ ձեռ լրագ-
րին, որ Լազարեան ձեռնարանի տեսուչ պ. Քանա-
նեանց, ժողով պէտք է կազմէր հայոց լեզուի և
կրօնի գիտատուներին և մի քանի այլ անձինքնե-
րից մի ընդարձակ ծրագիր կազմելու այդ երկու
առարկաների համար: Ժողովը իրաւ է կայացաւ,
բայց թէ ինչ դրական հետեանքի հասաւ, մինչև
այժմ անյայտ է մնում ամենքին»:

ՆՈՒԽՈՒՅ մեզ գրում են. «Մեր քաղաքի նիւ-
թական ոյժերը տարուց տարի սպաւում են:
Գլխաւոր հարստութիւնները քաղաքին չաւելն
ու մեծ աւաք են, որով առաջ ձանաղված էր
Նուխի ամբողջ Ռուսաստանում: Այժմ շաւերը
իրանք լեղզիները տանում են ուրիշ տեղեր ծա-
խելու, իսկ մետաքսը մի քանի թիֆլիսեցիներ
դալին են գաւառից հաւաքում, տանում են: Քա-
ղաքը մնացել է պարսպ: Քաղաքին նիւթապէս
վերջին մասնին հարուածն էլ տուել է այն հան-
գամանքը, որ Բագու-Թիֆլիսեան երկաթուղու
գիծը հեռացրին Նուխուց»:

ՇԱՄԱԽՈՒՅ պ. Իմանուէլ փրբուղաղեանց
գրում է հետեանքը, ուղղելով իր խօսքը դէպի
«Մշակի» խմբագիրը: «Համարում տեսարանական
հայերը ինձ հետ միասին ողբան ուրախ ենք ձեռ
լրագրի անաչառ դատողութիւնների մասին, չեմ
կարող նկարագրել անգամ: Մենք բարեմաղթում
ենք ձեռ ու ձեռ գործին երջանիկ ու երկար կեանք և
աջողութիւն: Գուց հայոց ազգի համար արդարեւ կը
թողնէ մի լաւ յիշատակ, որ տպագրւում է միայն
կարողանալու կատարելապէս գնահատել»:

Հնորակալութեամբ ստացանք պ. Ա. Բահայթ-
րեանցից նրա «Համառօտ գործական հոգեբա-
նութիւն» վերնագրով աշխատանքը, որ նշանակ-
ված է հայ ուսուցիչների համար: Գիրքը Թիֆլիսի
Ներսիսեան դպրոցի հրատարակութիւնն է և
տպված է Թիֆլիսում ներկայ 1882 թվին, Մ. Բո-
տինեանցի և ընկ. տպարանում: Գիրքը բաղկացած
է 158 էրեսից:

Երէկ, փետրվարի 11-ին ամբողջ օրը Միջազգա-
յին հեռագրական գործակալութիւնից հեռագիր-
ներ չը ստացվեցան: Այդ պատճառով «Մշակի»

երէկվայ համարը հրատարակվեցաւ առանց հեռա-
գիրների:

ՄՈՍԿՎԱՅԻՅ մեզ գրում են որ փետրվարի
4-ին, վարդանանց տօնի օրը, տեղի ունեցաւ
Լազարեան ձեռնարանում մի թատրոնական ներ-
կայացում, որ շատ ազդող կերպով անցաւ: Յա-
տուկ այդ օրվայ համար աշակերտները ընտրած
էին «Վարդանանց պատերազմ» պիէսան: Բացի
սրանից ներկայացրին հայերէն լեզուով և Մօլիէ-
րի մի պիէսա և ուսուցիչն լեզուով մի փողովի:
Ներկայացումից յետոյ եղաւ պարահանդէս, որ
տեւեց մինչև դիշերվայ ժամը երկուս և կէսը:

Մեզ գրում են ԳԱՆՁԱԿԻՅ հետեանքը «Այստեղ
մարդասպանութիւնը յաճախ կրկնվող երեւոյթ է դա-
ռնում: Նորկրումս Բաղմանլար անուանված թուղբերի
թաղում, մի օրիորդ փախցնելու ժամանակ, երկու
հոգի սպանվել են, իսկ երկուս ծանր կերպով վի-
րաւորվել: Մարդասպանութիւնները բաւական չէին,
այժմ մի այլ դժբաղդութիւն էլ հասաւ մեզ.
փետրվարի 6-ին երեկոյեան ժամը 9-ին, քաղաքի
խանութները սկսեցին այրվել և կրակը հեռահեռ,
ընդարձակվեց: Այսու են որ մօտ 100,000 ռուբլ
գումարի վնասը կը հասնէ ընտանիքներին: Հորեհի
մանրամասնութիւնները գուցէ կը յայտնեմ մի
այլ անգամ»:

Մեր թղթակիցը հաղորդում է մեզ ԲԱԳՐՈՒՅ,
որ փետրվարի 5-ին Բագուի քաղաքական դպրոցի
բարձր դասաւանդի հայ աշակերտները կուրբի
դահլիճում, պ. Սահարաբեանի խմբի մասնակցու-
թեամբ, մի ներկայացում տուեցին, քաղաքած
հետեան չորս պիէսաներից. «Մօզա», «Կրթութի-
ւոր», «Ներք քաջեր» և «Գիշերվայ սարը խեղ-
է» իսկ վերջում կային կենդանի պատկերներ:
Ներկայացման արդիւնքի մի մասը ստանում է
պ. Սահարաբեանց, միւս մասը աշակերտները, ու-
րոնք փողը գործ են դնում բարեգործական նպա-
տակով: Գահլիճը, ինչպէս գրում է թղթակիցը,
լի էր հանդիսականներով, որոնց թումը կային
մի քանի ուսուցիչ և թուղբեր: Նամակագիրը ա-
ւելացնում է որ ժողովուրդը զո՞հ մնաց ներկա-
յացումից:

Այսօր Հնորակալութեամբ ստացանք Թիֆլիսի
լուսանկար Ա. Տէր-Ղանդեանցից մի փառաւոր
ընծայ, Կ. Պօլսի Ներսէս պատրիարքի մեծազգի
Փոռօգրաֆիական պատկերը, որի տակը արձա-
նագրված է ուրեկայ տառերով «Լուսանկար Ա.
Տէր-Ղանդեանցից նուէր «Մշակ» լրագրի մեծ.
խմբագիր պ. Գրիգոր Արծրունեան»:

Յայտնում ենք մեր թղթակիցներին, որ «Մշա-
կի» խմբագրութիւնը յետ է դարձնում միմիայն
ծանր աշխատանքներ, եթէ նրանց չէ տպում:
Ծանր աշխատանքների թումը մենք հաշուած ենք՝
վէպեր, մասնագիտական գրվածքներ, կրթիւններ,
մի իտքով բանասիրականները: Իսկ փոքրիկ գրը-
վածքներ, թղթակցութիւններ, նամակներ, լուրեր,
եթէ չեն էլ տպվում, մենք նրանց չենք դարձ-
նում հեղինակներին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

РУССКІЙ КУРЬЕРЪ. ԼՐԱԳՐԻ ՅՈՐ-
ՈՒԱԾԸ:

Թիւրքիայից ստացված տեղեկութիւնները
ոչ թէ միայն միակերպ են, այլ և աչքի են
ընկնում իրանց մասլը բովանդակութեամբ:
Կարելի է միայն զարմանալ թէ ինչպէս կա-
րող է գոյութիւն ունենալ, քաղաքական

դեր ցանկանալ և ընդդիմանալ եւրոպական ճշմանը մի պետութիւն, որի հիմունքները խախտված են, որի վարչութիւնը անընդունակ և կաշառակեր է, որի զանաւորները դատարկ է և որի հպատակ ազգութիւնները անբաւական են իրանց կառավարութիւնից: Գայտնի է, որ Արաբիայի մէջ նշանաւոր ապստամբութիւն է սկսվել և այնտեղ բաւական շատ զօրքեր են ուղարկված: Բացի այդ մենք գիտենք, որ Հայաստանը ամբողջապէս անբաւական է, որ եւրոպական կառավարութիւնների բոլոր աշխատանքները Բ. Կրանը համոզելու համար հայերի պետք է զուր անցան, այնպէս որ հայոց պատրիարքը Կ. Պոլսի մէջ ստիպված էր հրաժարվել իր պաշտօնից: Աբասալայի ճշմարտութիւնը միայն զինադադար կարելի է համարել և ոչ թէ հաշտութիւն: Վերջապէս եւ զիպտական ժողովրդի այժմեան տրամադրութիւնը լաւ ապագայ չէ խոստանում այդ երկրին: Մահիդօնիայի մէջ թիւրքերի, յոյների, և բոլորացիների համակեցութեան շնորհիւ շատ անգամ անկարգութիւններ են ծագել, որոնք կարող են ընդարձակ ապստամբութեան բնաւորութիւն ստանալ: Մի խօսքով թիւրքի բոլոր մասերը կամ բացարձակապէս ապստամբված դրութեան մէջ են, կամ պատրաստվում են ապստամբվել: Այնու ամենայնիւ «հիւանդ մարդը» որին արագ մահ էին գուշակում, դեռ ևս ապրում է և ձանձրացնում է եւրոպական պետութիւններին: Թիւրքաց կառավարութիւնը և նրա հաշտով ապրող զանազան տարրերը միշտ ոգևորվել են զանազան երազներով, որոնք միշտ ապարդիւն են անցել: Այդպիսի մի երազ էր Փարսիի խաղաղութիւնից յետոյ Անգլիայի և Ֆրանսիայի հզօր հովանաւորութեան վրա դրած յոյսը: Այն ժամանակ Պարսիայի արեւելեան շահերի մասին ոչ ոք չէր մտածում: Եզիպտական հարցի պատճառով պատահած անցքերը ապացուցին, որ թիւրքերի յոյսը Անգլիայի և Ֆրանսիայի վրա միայն մի երազ էր: Այժմ թիւրքերը հաւատացած են, որ Գերմանիան, եթէ նրանց չի ազատի, զոհեալ առժամանակ կը պահպանի թիւրքի գոյութիւնը: Թիւրքիայի մէջ նշանաւոր պաշտօնները գերմանացի աստիճանաւորներն են յանձնվում: Սուլթանը և գերմանական կայսրը փոխադարձապէս բարեկամական ցոյցեր են անում և միմեանց արտաքին կարգի գեապանութիւններ են ուղարկում: Թէ ինչպիսի հետևանքներ կունենայ թիւրքաց կառավարութեան յոյսը Գերմանիայի օգնութեան վրա, դա կերևայ մօտաւոր ապագայում:

ՉԵՐԵՕԳՈՐԻԱ

Յետինէից „Polit. Corresp.“ լրագրին յունվարի 25-ից գրում են: Մեր փոքրիկ իշխանախոս քաղաքը որբացել է: Իշխանի ընտանիքը պալատականների հետ ժամանակաւորապէս տեղափոխվեցաւ Անտիվարի, որտեղ ապրում է սենատի նախագահ Բօժիդար Պետրովիչ և արտաքին գործերի մինիստր Ստանիսլո Բադովիչ, մինչդեռ ներքին գործերի մինիստր Մաշա Վրբիցա ներկայումս ծանապարհորդում է երկրի մէջ: Չերեօգորիայի մէջ Վրբիցա յայտնի է իբրեւ աշխատակեր և մի և նոյն ժամանակ ընդունակ մարդ: Մաշա Վրբիցա ամեն բան տեսնում է լուրձ է և նրա ձեռքը ամեն բանի հասնում է: Երկար տարիների ընթացքում Վրբիցային իշխան Նիկոլայի աջ ձեռքն են

համարում և նրան ծանադողները խոստովանում են, որ զոհեալ ներկայումս Վրբիցա ներքին գործերի համար ամենալաւ մինիստր է: Ժողովուրդը վախենում է նրա եռանդից, դարձնում է նրա խորամանկութեան վրա և գնահատում է նրա անդադար գործունէութիւնը: Նրա գործողութիւնները իր ցանկացած ազդեցութիւնն են գործում: Կրա անձնաւորութեան այդպիսի մանրամասն նկարագրելու պատճառն այն է, որ Չերեօգորիայի սահմանների մօտ ներկայումս կատարվող ապստամբութեան ժամանակ, Վրբիցա առաջնակարգ և մինչև անգամ բացառական նշանակութիւն ունի: Օտար լրագրիչների մէջ վերջին ժամանակներում շատ զրկեցաւ այն հարցի առիթով, որ Չերեօգորիական մինիստրութեան մէջ Աւստրո-Ունգարիայի պատճառով տարածայնութիւն է տիրում, որ մինիստրներից մի քանիսը այդ երկրի բարեկամութեամբ են վերաբերվում, միւսները թշնամութեամբ: Հաւատացնում էին, որ մի քանի մինիստրները չէին կամենում ուղարկութիւն դարձնել Չերեօգորիայի միջազգային պարտականութիւնների վրա, մինչդեռ Մաշա Վրբիցա պնդում էր, որ հերքեցողիցների ապստամբութեան ժամանակ Չերեօգորիան պէտք է չէր զոհ մնայ: Գուցէ այդ լուրերը ձեռնարկ են, դուցէ սենատի նախագահը և արտաքին գործերի մինիստրը թշնամութեամբ են վերաբերվում Աւստրո-Ունգարիային, բայց դա ոչինչ նշանակութիւն չունի, քանի որ ներքին գործերի մինիստրը համոզված է, որ իր հայրենիքի կենսական շահերը պահանջում են Չերեօգորիական կառավարութեան կատարելից և իրաւ չէրքութիւն չէրքեցողիցների ապստամբութեան ընթացքում: Յետևելով իշխանի անպայման պաշտպանութեան վրա, Վրբիցա ամեն միջոցներ գործ է դնում խիստ չէրքութիւն պահպանելու համար: Նա մշտապէս սահմանների վրա է, մի գիւղից միւսն է անցնում և համոզում է բնակիչներին չանցնել սահմանը և չը միանալ ապստամբների հետ: Մինչև այժմ նրա աշխատանքները աջողութեամբ են պատկեր: Գուցէ մի քանի Չերեօգորիցներ զաղանի ծանապարհներով անցել են սահմանը, բայց այդպիսիների թիւը շատ աննշան է: Չերեօգորիական կառավարութիւնը բարեխղճաբար է վարվում, բայց, եթէ աւստրո-ունգարական կառավարութիւնը շուտով չի ձեռնարկ ապստամբութիւնը, հազիւ թէ կարելի լինի երկար ժամանակ զսպել պատերազմասեր Չերեօգորիցներին:

ԹԻԻԻԻԻԱ

Կ. Պոլսից „Polit. Corresp.“ լրագրին գրում են փետրվարի 3-ից: Թիւրքիայի մէջ ներկայումս տիրող հանգստութիւնը երեւի բարի պտուղներ կը տայ: Կարելի է յուսալ որ սուլթանը, որի անձնական աշխատանքներն երկիրը պարտական է, որ աջողութեամբ լուծվեցան քաղաքական բազմաթիւ նշանաւոր խնդիրներ, չի կանգնի կէս ծանապարհի վրա և իրական միջոցներ գործ կը դնի թիւրքաց կայսրութիւնը վերակազմելու համար: Եթէ գործին այս տեսակետից նայենք, իշխանութեան կենտրոնացնելը սուլթանի պալատում կարող է բարեբեր ազդեցութիւն ունենալ թիւրքիայի վրա: Թիւրքիան այժմ այնպիսի դրութեան մէջ է, որ նրա բարօրութիւնը կախված է գործերի արագ վճռելուց: Պէտք է աշխատել որքան կարելի է շուտ զարգացնել թիւրքիայի առևտուրը և արդիւնաբերութիւնը և այդ նպատակի համար շատ լաւ է, որ ամեն

բան պալատի մէջ է վճռվում և այդպիսով առաջն է առնվում այն բոլոր ինտրիգաների, որոնք իւրաքանչիւր օրինաւոր գործին արգելք են լինում:

Սուլթանին մի նախագիծ է ներկայացրած մինչև Բաղդադ երկաթուղու գիծ կառուցանելու համար: Սուլթանը գիտէ, որ այդ գիծը նշանաւոր օգուտներ կը տայ և կարճ ժամանակամիջոցում առևտրական և պատերազմական ծանապարհ կը դառնայ դէպի Հնդկաստան: Եթէ այդ ծանապարհը կառուցանվի, Անգլիայի և Թիւրքիայի քաղաքական յարաբերութիւնները արմատականապէս կը փոխվեն և այդ փոփոխութիւնը յօգուտ թիւրքիայի կը կատարվի: Կ. Պոլսի մէջ այդ նախագիծին մեծ նշանակութիւն են տալիս, յուսալով, որ նրա իրագործումը մեծ նշանակութիւն կը տայ թիւրքիայի պատերազմական ոյժերին: Կառավարութիւնը այդ նախագիծի հրատարակելը խոստովանում արդեւել է, որովհետեւ երկաթուղու գիծը պէտք է անցնի ստրատեգիական նշանաւոր կետերի մօտ: Մտադրութիւն կայ այդ գիծը միացնել Եւրոպայի հետ, մի կամուրջ կառուցանելով Բօսֆորի վրա:

Փետրվարի 3-ին բարձուհի Կալիցէ մի փառաւոր երեկոյթ տուեց, որին ներկայ էին բոլոր զեականները և այստեղի ընտիր հասարակութեան անդամները: Եօրդ Կէօֆերին, որ նոյնպէս ներկայ էր, զիտմամբ չէր խօսում եզիպտական խնդրի մասին, հետեւելով անգլիական քաղաքականութեան այն կանոնին, որ Կ. Պոլսի մէջ չը պէտք է խօսել Եզիպտոսի մասին: Ընդհանրապէս թէպէտ յօրդ Կէօֆերին շատ ուրախ է այն զիբքի պատճառով, որ բռնել են նրա ընկերները ինչպէս հայկական, նոյնպէս և եւզիպտական խնդիրների վերաբերութեամբ, բայց նախադաս է համարում, որ այդ հարցերի մասին իր հետ չը խօսեն:

ՆԱՄԱԿ ԹԻԻԻԻԻԱՅԻՅ

Կ. Պոլսի, 2 փետրվարի 82

Ինչ կընենք, ուր ենք, եւ թէ առաջ կերթանք: Պատրիարքի հրաժարականի խնդրը նոյն միճակին մէջն է, գէթ առ երեկոյթս, ինչ որ էր քառասուն օր առաջ: Հրաժարականը մերժուած Ազգ. ժողովին, մերժուած Բ. Գուռնէին: Եւ պատրիարքը չէ կարող եւս առնել հրաժարականը առանց փոփոխութեան եղած ըլլալը—իւրաց վիճակին մէջ: Երբեք զիստ հոս է պիտի ըլլայ այդ փոփոխութիւնը: Թրքաց հաստոյ հանգանակութեան մաս կը կազմէ այն հանգումը թէ բարեկարգութիւնը միշտ հոս մը ունին ջրիտոնութեան և եւրոպական քաղաքակրթութեան, մահաբեր իտալական սեւտութեան: Արտաքին ճնշում մը միայն կրնայ ըստիպել զիբքը ընել ինչ որ հակառակ է իրենց համոզման: Հայկական խնդրոյ առթիւ պէտք չէ յուսանք այդ ճնշումը: Բարեկարգական հարցերը թիւրքիայ մէջ լուծելու կենսական պայման մը կայ որ կը պակսի մեզ: Վաթսուն տարիէ թիւրքիոյ զանազան մասունքները եթէ անջատուեցան իրմէն, կամ իրեն հետ մնալով մարդկային կեանք մը կը վայելին, լոկ չնորհիւ: Եւրոպայի հասարակաց կարծեաց չէ, որ թէպէտ անագին էր ի նըպատ իրենց: Պատմութիւնը անողբելի օրէքներ ունի: Թիւրք կառավարութեան ու և է ձանձրոյթ պատճառելու վիճակի մէջ չենք, ուրիմ մեզ ոչինչ բարեք անողում:

Զորմէ հետէ պատրիարք չունենք, բնական է որ ազգային գործերը քիչ շատ տարտամ վիճակի մէջ ըլլան: Գործոց բոլոր հոգը մնացած է պ. Տիգրան Լուսուֆեանի վրայ, զոր Ներսէս սրբազան ինքն ընտրած էր Ազգ. վարչութեան ատենապետ: Պ. Լուսուֆեան առարկայ է զանազան յարձակմանց, սակայն համոզված է թէ իր պարտականութիւնները խղճի մտքը կը կատարէ: Մենք ալ գիտենք որ պ. ատենապետը ճարտար անձ մ'է և ազգային գործերը լաւ վարելու ոչ միայն փախազ այլ և կարողութիւն ալ ունի:

Պ. Լուսուֆեան Բ. Գրան հետ բանակցելով կաշխատի համոզել կառավարութիւնը որ, օգտա-

կար է թէ Օսմ. իշխանութեան և թէ հայ ազգին որ շուտով վախճան դուրս այն ամեն զանազանաց զոր պատրիարքը թուած է իր հրաժարականի մէջ: Պիտի յաջողի:—Ամենակ աւելի մտաւորականութիւն պատճառողը Կիլիկիոյ կաթողիկոսին խնդիրն է: Այնպէս կերելի թէ այս հարցը մեր փախազած կերպով լուծուի: Մասնաւոր տեղեկութիւններ ստացած եմ թէ նախարարները այժմ բաժանեալ են այս խնդրոյն մէջ: Սաիդ բաշա հիւմա կը հակի այն կարծեաց թէ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը Կ. Պոլսոյ պատրիարքութեան պէտք չէ բաժնել քաղաքականապէս, և այս առթիւ պէտք չէ հայոց ազգին և Բ. Գրան մէջ հակառակութիւնը վառ պահել: Իսկ ձեւով թաշա, արդարութեան գործոց նախարարը, հակառակը կը պնդէ:—Բ. Գրան և Անգլիոյ յարաբերութիւնները քանի որ այս վիճակին մէջն են Սաիդ ալ իր կարծիքը չը փոխէ:—Այս խնդրոյն վրա աւելի մանրամասն տեղեկութիւններ ստացած եմ, բայց առայժմ հաղորդել պատշաճ չէ: Սա համոզումը դուրս գաւ իսկ թէ պ. Լուսուֆեանի վարչութեան օրով Կիլիկիոյ կաթողիկոսական խնդրը Մկրտիչ կաթողիկոսի փախազած կերպով պիտի չը վերջանայ: Բ. Գուռը յանձնաժողով մը ընտրեց երկու թիւրք պաշտօնեայ և մի հայ, պ. Տիգրան Լուսուֆեանը, որ ուսումնասիրեն այս խնդրը և համաձայնի ու համաձայնութեան արդիւնքը հաղորդեն կառավարութեան:—Այսպիսի յանձնաժողով մը ընտրութիւնը որչափ կարկուտ գործ մը ըլլալը յայտնի է: Այս կը նշանակէ թէ, Բ. Գուռը իր նախապէս տուած որոշումներն փոփոխելու տրամադիր է: Չըսեմ կատարելապէս ստոյգ, բայց շատ ապահով է որ այդ յանձնաժողովը պիտի ընդունի այն պայմանադիրը զոր Ազգ. յանձնաժողովը և կաթողիկոսը ընդունած են:

Այս խնդիրն երբ կարգադրի և միւս խնդիրներն ալ կարգադրուին ամեն իսկ, Ներսէս սրբազանը ալ եւս պատրիարքական աթոռը չը կրնար վերադառնալ: Ներքին և արտաքին են պատճառները: Արտաքին պատճառներն են. 1-ն պատրիարքի և Սաիդի մէջ եղած հակառակութիւնը, որ այս վերջնոյն համար տեսակ մը անձնասիրութեան խնդիր եղած է: Իրաւ է որ քաղաքագիտութեան մէջ այս տեսակ նկատումներ պէտք չէ ըլլան, բայց թիւրքերը ուրիշ կերպաւ կարուած են: 2-դ Սուլթանի դժգոհութիւնը: Երբ Սուլթանը կամը յայտնեց թէ պատրիարքը չը հրաժարի, Ներսէս սրբազան օգտակար չը դուռ յարգել այս կամը, այնուհետեւ այլ ևս հնար չէ որ ուրիշ մը կամը, ուրիշ մը փախազ յարգելով Ներսէս սրբազան իր հրաժարականը եւս առնէ: Եթէ այդպէս ընէ, այդ ուրիշը Ազգ. ժողով ըլլայ, ազգային կամը, թէ կառավարութիւն, Սուլթանին վեր դառած պիտի ըլլայ, և այս կարելի է:—Բ. Գուռը ալ երբեք հրաւեր մը չը խրկեց, և չը պիտի ալ խրկէ:

Իսկ ներքին պատճառներն են այն արգելքները որոց կը հանդիպի պատրիարքը նոյն իսկ ազգին կողմէն:—Ազգային անդուլին մէջ պէտք եղածին չափ փող չը հաւաքուին և պատրիարքարանը շատ նոյն վիճակի մէջ է: Հայկական խնդրը մը ունենալ և ուղիղ զայն յաջող կերպով լուծել առանց մարդու, առանց փողի և առանց գործողութեան!—Պատրիարքը քաղաքական ձեռնարկները, խորհուրդները, քննադատութեան ենթակայ ընկուտ փախազը: Այս փախազը զոր կը ջանան իրականութիւն ընել, մեր կարծածն աւելի վնաս կը հասցնէ գործոց:—Խմբագրութիւն մը առանց ազգային շահոց համապատասխանող ուղղութեան:

Պատրիարքի խոչնդոտ եղող ներքին պատճառներու վրայ առայժմ հարկանցի անցնելը լաւ կը սեպենք:—Մենք դմող գիտենք:

Ազգ. ժողովը երկար ատենէ չէ գումարում. չաւտերը աղմուկ կը հանեն թէ շուտ գումարով, սակայն այս եղած աղմուկին հակառակ դեռ երկար ատեն պիտի չը գումարուի: Քանի որ պատրիարք չը կայ, ազգային ժողով ալ չը կրնար գումարուիլ: Եթէ այժմ ժողով գումարուի միայն պատրիարքաւ կան խնդրոյ համար պիտի գումարուի: Պատրիարքական խնդրը իր նախկին վիճակին մէջն է: Ազգ. վարչութիւն և դիւանք կաշխատեն կարգադրել ինչպէս իրենց յանձնարարուած էր, այն պատճառները որք կը հարկաւորեն պատրիարքը հրաժարի: Այս կարգադրութիւնները տակաւին չեն աւարտած, զի վարչութեան և ատենապետաց կամքը կանխաւ չէ, այլ կառավարութեան: Եթէ ժողովը գումարի ինչ պիտի ընէ:

Այստեղի հայերէն թերթերէն ոմանք սկսած են «Journal d'Orient»-ի դէմ կատաղի յարձակումներ

ընել: Այդ հատուկները կտրած կը խրկեն: Ատոնց վերաբերեալ պէտք եղած տեղեկութիւններն ու նկատողութիւններն յաջորդ թղթատարով, զի զի-չերը յառաջացած է և թղթատարը առաւօտուն կանուխ կելլէ:

Յօդուտ Միացեալ ընկերութեանց մեծ պարահանդէս մը պիտի տրուի: Անգլիոյ զեպանքը ընդունած է այդ պարահանդիսի պաշտպանութիւնը: Յանձնաժողով մը կազմուած է որոյ նախագահն է պ. Ֆոլքերը, Պանթ-Ուիթմանի անդ-դիացի ընդհանուր անօրէնք: Գանձապետ է պ. Յոլմէյր: Աղարկան, եղբայր հոսիմէական հայոց Աղարկան գեր. պատրիարքի: Գեր-նախագահ պ. Միք. Փորթուզիան, հակահաստնեան մասէ, անտեսագետ, նախագահ Կ. Պօլսոյ մեքսստան բարձրագոյն ժողովոյ, և ազգային երեսի պատմագետ: Քարտուղար պ. Ալէքսանդր Մերկէ-Գուլի, յայտնի երկրագիտութեան, եղբայր պ. Զար-Մերկէ-Գուլի, ատենապետ Ալէք. ժողովոյ: Նիլէ յանձնաժողովը, որ բաղկացած է 30-էն աւելի ան-ձերէ, աշխատի ինչպէս որ պէտք է, կրնայ 10,000 բարձր մօտ դրամ հաւաքել, զոմար մը ում մի-ձապէս կը կարօտի ընկերութիւնը:

Գիտությունն արժանի կէտ մը: Այսօր հայ և անդուստրիա երկուսն իրարմէն կը շարժարարկան յանձնաժողովոյ անդամաց անուններն: Արեւոյ մէջն են «Թայմս» և «Թան» լրագիրներու Կ. Պօլսոյ թղթակիցները, Կ. Պօլսոյ «Միտիւն» և «Լէ-վըն» էջերը: Թերթերու անօրէնքները: Սակայն հայ թերթի մը խմբագրին կամ անօրէնքին անունը չը տեսնենք: Չեմ յիշեր ալ որ այսքան տրուած պարահանդիսներու յանձնաժողովներու մէջ հայ խմբագիր մը գտնուած ըլլայ, մինչ միշտ օտար խմբագիրը կան: Ալէք. կրթական մարմնոյ օգտին համար աշխատելու կոչուած խումբին մէջ ինչու հայ խմբագրութիւնը ներկայացուցի մը չունենայ: —Սակայն ինքն իրեն ալ կը հարցնեն, արդեօք ո՞վ է մեղաւորը, չընտրողը թէ չընտրուողը:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պօլսոյ մեզ հաղորդում են, որ այս օրե-րս լոյզ Գիւֆըրին կրկին տեսակցութիւն ունե-ցաւ սուլթանի հետ հայոց խնդրի վերաբերու-թեամբ: Սուլթանը խոստացաւ ամեն ջանք գործ-դնել Հայաստանի վերանորոգութիւնների խնդ-րի իրագործումը կարողութեան չափ շտապեց-նելու:

—Կ. Պօլսոյ մեր թղթակիցներից մինը մեզ գրում է որ հայոց լրագիրներում լուր է տպւած, որ պարսից շահը կանչել է Լօնդոնից հայազգի Մէլքում-Խանին, որ Լօնդոնի պարսից դեսպան էր, և նշանակել է նրան Պարսկաստանի մեծ-մի-գիր, այսինքն առաջին մինիստր, նորերումս վախ-ճանված մեծ-միգիրի տեղ:

—Լօնդոնի «Daily News» լրագիրը հաղորդում է, որ անգլիական պատգամաւորների ժողովի նիս-տում, փետրվարի 9-ին, իրանական գործերի մի-նիստը Ֆորստեր, կառավարչական քաղաքականու-թիւնը պաշտպանելով, արդարացում էր Պարսկէի և պարսկախոսի մի քանի իրանացի անդամների կառավարութիւնը հետեւալ խորհրդածութիւննե-րով: «Նրանք զրոյւմ են ժողովրդին չը հա-զանդիվ օրէնքներին և աշխատում են թագու-հու իշխանութիւնը իրանիայում փոխարինել իրանց անձնական հեղինակութեամբ:» Ֆորստերի ձառը երկու և կէս ժամ շարունակվեցաւ, որից յետոյ մնացած վիճարկութիւնները մինչև միւս նիստը յետաձգվեցան:

—«France» լրագիրը Բօխէստին պատգամաւոր-ների ժողովի փութ-նախագահ ընտրելու առիթով ասում է հետեւեալ: Պատգամաւորների ժողովը վերջնականապէս կուցը Գամբետտայի հետ. նա իր իւրաքանչիւր գործողութեամբ ապացուցանում է այդ: Այդպէս կարծում են բոլոր կապերը, միայն առաջին քայլն է դժուար, և որքան սատարի դո-րեղ էր սկսել, այնքան խորն է և ատելութիւնը: Այսօր մեծամասնութիւնը, որը այնքան երկար ժա-մանակ խնայում էր խորհրդի նախագահի կամ-քին, գործերից այդ մասերիական քննից: Բէլլիլի պատգամաւորը սատարի ձգեց լարը, և նա պատմու-ցաւ: Հանրապետականների ժողովը շատ լաւ է զգում իր արժանաւորութիւնը և չէ կարող որ և է տիրողը հաղթանակել: Բօխէտ Գամբետտայի անձնական թշնամին է և նրա ընտրութիւնը խո-րին նշանակութիւն ունի:

—«Presse» լրագիրը յունվարի 28-ից հետաքը-բեր մանրամասնութիւններ է պատմում մամուլի

դրութեան մասին Բերլինում: Տրամադրութիւնը, ասում է այդ լրագրի թղթակիցը շատ հանդիստ և անորոշելի է: «Liberal Correspondenz» լրա-գրի աշխատակիցները պատմում են, որ անցեալ շաբաթից ամեն օր խմբագրութիւն է գալիս պօ-լիցիական պաշտօնական և զանազան հարցմունք-ներ է անում: Այդ պատճառով խմբագիրը այրեց այն բոլոր թղթերը, որոնք կարող էին այդ պա-րոնի հետաքրքրութիւնը չարժէ: «Lib. Corr.» լրագիրը ազգային աղատարների օրակցիկից ամենապահապան է, այդ պատճառով պօլիցիա-կան հակադրութիւնը աւելի օտարաւոր և անդադա-րելի է:

—Ֆրանսիական պարլամենտական յանձնաժո-ղովը, փետրվարի 8-ին երկարատև նիստ ունեց-ելով, միաձայն ընդունեց սկզբունքով պատգա-մաւոր Նալէի առաջարկութիւնը ապահարգան մասին: Այնու ամենայնիւ, այդ նախագի-ծը բաւական չափ փոփոխութիւնների կենթարկի-ւ և թէև յանձնաժողովը սկզբունքով համաձայն է այդ առաջարկութեան հետ, բայց մանրամասնու-թիւնների մէջ բաժանուած է նրա կարծիքը:

—Փարիզի «Constitutionnel» լրագրի խօսքերի համեմատ փարիզի 20-րդ շրջանի (Բէլլիլի) ընտ-րողները վճռեցին, փետրվարի 10-ին, իրանց առաջին ժողովում, որ եթէ Գամբետտա չի գա-լի ընտրողների ժողովում հանչաւ տալու իր յանձ-նաւած լրագրութիւնների համար, այն ժամանակ ընտրողներից կազմված պատգամաւորութիւնը կառավարի նրան հրաժարվել պատգամաւորի կոչումից:

—«Polit. Correspond.» լրագրին փետրվարի 7-ին Կ. Պօլսոյ գրում են հետեւեալ: «Գործերի դրու-թիւնը Աֆրիկայում անդադար մինիստրների խորհրդի առաջալ է դառնում պարսկաւոր: Այդ խորհրդակցութիւնները վերաբերում են և ինքնին մէջ պատմած անցքերին, որոնց նշանակութիւնը անկասկածելի է, որովհետև յաղմուցը ինչքան դնում է աճում է:»

—«Բէլլիլի ընկերութեան» փետրվարի 6-ից թափուկից հեռագրում են հետեւեալ: Մէլքիցից ստացած նամակներին նայելով, Էլիւ-Խանը պարս-կական կառավարութիւնից դեռ ևս փող չէ ստացել, որ անհրաժեշտ է թէ՛նրան դնալու հա-մար, բայց նրան խոստացած է, պարսից մայրա-քաղաքը հասնելուն պէս, մօտ 4000 ֆունտ ստերլինգ տալ: Էլիւ-Խանի օվտան ցանկանում է թէ՛նրան ուղեկցել նրան, բայց պարսկական կառավարութիւնը վերադառնում է, որ նա միայ-նակ լինի: Բայց վերջին տեղեկութիւններին նա-յելով, Էլիւ-Խանը մտադրութիւն չունի շուտով հեռանալ Մէլքիցից: Գոնէ նա այնտեղ կէս տա-րով տուն վարձեց և խաֆիք բերել տուց իր ըն-տանիքը: Հաստատում են, որ իր թէ Էլիւ-Խան յարաբերութիւններ ունի թուրքմէնների հետ և դիտարկութիւն ունի նրանց հետ միացած յար-ձակվել անգանական երկրի վրա: Ասում են, որ Էլիւ-Խան 1000 ձիաւոր մարդիկ ունէ: Արդու-րանման-խանի դեսպան, Ամէլ-ալ-Խան, անցեալ շաբաթ թէ՛նրան հասաւ: Գիտապահութեան նպա-տակն է թուրքութիւն ստանալ պարսից կառա-վարութիւնից վերադարձնել անգանական սահ-մանների վրա այն 6000 ընտանիքները, որոնք ան-ցեալ տարվա անկարգութիւնների պատճառով Հէրատում, դուրս եկան Աֆղանիստանից և բնակ-վեցան Խանում, իսկ այժմ ցանկանում են հայ-րենիք վերադառնալ:

—Լօնդոնի «Բէլլիլի ընկերութեան» Կ. Պօլսոյ հեռագրում են, փետրվարի 9-ից, որ Ալի-Ֆաուդ-փաշան ժողովրդական լուսաւորութեան մինիստր նշանակվեցաւ: Նախկին մեծ միգիր Մահմուդ-Նէ-լի, փաշայի ազգականները, Բեռլինի և Սալո-նի, որոնք պետական յանցանքի մէջ մեղադրված լինելով, կարանաւորված էին, կրկին արձակվե-ցան:

—Կ. Պօլսոյ մեզ հաղորդում են, որ ամեն օր Զմիւռնիայից, Ամասոնից և Փարթ-Ասիայի շատ ուրիշ տեղերից մեծ բազմութեամբ յոյներ Կ. Պօլսոյ վրայով գաղթում են դէպի Յունաստանին նոր միացած երկրները: Ինչպէս լրագիրները հաղորդում են, այդ երկիրներում յոյներ արդէն կազմում են 90 պրօցէնտ մարդը ազգաբնակու-թիւնից: Յոյների հակապատկերը, ասում է մեր թղթակիցը, կազմում են թիւքաց հայերը, որոնք, ընդհակառակն, անդադար գաղթում են Հայաս-տանից և գետնազուրկ են Կ. Պօլսոյ, այդտեղ ընդմիջում ընդմիջում համար: —Վանից մեզ գրում են որ Սոլլիւնց մասնա-ժողովը այս տարի մեծ քանակութեամբ ալիւն է

ցանկ տուել Վանի վերաբերում, որ և խիստ առատ է դուրս եկել: Առաջիկայ դարձան այդ պատճառով մասնաժողովը պէտք է ալիւն ցանկ տալ և խորհրդի ու Բաղէշի կողմերում: Թուրքաց կառավարութիւնը, ինչպէս հաւատացնում են, խոստացել է առաջին տարիները այդ բերքից տա-սանքը չառնել:

—Պարսկաստանից մեզ գրում են որ Բինարի կողմերում պարսից-աղբութիւնը սատարի ամրաց-նում է և իր զօրքերի թիւը աւելացնում: Առաջի-կայ դարձան դարձեալ քուրդերի մեծ շարժումն է գուշակվում, մանաւանդ որ հաստատվում է այն լուրը թէ Շէյխ-Խալալը իրաւունք է ստացել սուլթանից վերադառնալ Հայաստան:

ԽԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզի անհայտների չարախնդարութիւնը Գամ-բետտայի հրաժարականի առիթով սահման չունէր և իւրաքանչիւր քայլափոխում արտայայտվում էր ամենախաղաղաւոր կերպով: Մի նայի օրը, երկու-շան, պատգամաւորների այն ժողովից յետոյ, որ մինիստրութեան նախկին գլխաւորը հարկաւոր հա-մարեց հրաժարական տալ, արմատական մի քանի թերթներում սե չըմանակներով մի քանի յայտա-բարութիւններ տպվեցան, որոնց մէջ Գամբետտա-յի ծնունդը հրախրվում էին վերջինի թաղման հանդիսին: Իսկ պատկերազարդ թերթերից մէ-կում ներկայացրած էր մէկ կատաֆալկ, որի կա-ռուցման Բօչֆօրն է, իսկ կառուի ետը դնում է Լուիզա Միշէլ պարելով, մէկ ձեռքում ունենալով ջուլետի, իսկ միւսում երկայն դրօշակ հետեւալ վերնագրով. «Մեծ մինիստրութեան թաղումն:» «Grelot» պատկերազարդ թերթը իր ընթերցողնե-րին հետեւալ պատկեր ընծայեց: Պատկերը ներ-կայացնում է Գիւրկանացի, Բօչֆօրը, Համէլտի չո-րերով, ձեռքում բռնած ունի Գամբետտայի դանդը, և Շէքսպիրին նմանվելով բացականչում է Գա-նիայի պրինցի յայտնի խօսքերը «Poor Jorick» (Թեղձ Եօրիկ):

Գերմանացի նշանաւոր պատմաբան Լեօպոլդ-Ֆօն-Բանկէ, փետրվարի 13-ին, տօնից Բերլինի դիտութիւնների աղաւթմայի իր անդամակցու-թեան յօդուքում: Նա կայսրից դադունի խորհր-դականի տիտղոս տառալ: Այժմ Բանկէ 86 տա-րեկան է և չը նայել իր գառամալ հասակին, նա ոչ թէ միայն ֆիզիկապէս առողջ է, այլ և պահպանել է իր մտաւոր ընդունակութիւնները: Գիւր 1867 թին նա աճուց իր յիմնամայ դօ-տորական յօդուքները:

Բօժէր ամուսինները քաղաքական համոզմունք-ների տարբերութեան պատճառով ցանկացան ապահարգան ստանալ: Մարդը վաճառական է, որը 200,000 ֆրանկ կապիտալ ունի, իսկ կինը քաղաքականութեամբ է պարագում և մօտիկ յա-րաբերութիւններ ունի Լուիզա Միշէլի և Իւրերտի-նա Օկլերի հետ: Մինչև 1871 թիւը, նա, լաւ կրթված կին լինելով, համեստ կերպով ապրում էր իր մարդու հետ: Բայց 1871 թիւ տխուր օ-րերը նրան արմատականութեան գիրը դրեցին: 1872 թիւ իւրաքանչիւր նախ կալիֆօրնիա ճա-նապարհ ընկնելու ժամանակ, պ. Բօժէր նկատում էր, որ իր սնուկից փողեր են պակասում: Սկիզբից նա կարծում էր, որ դողեր են յափշտակում փո-ղերը, սկսեց հսկել, և յանկարծ յայտնվեցաւ, որ մնացուկից փողեր գողացողը իր կինն է, որը գործ-նականապէս իրագործում էր կապիտալը հաւատա-րապէս բաժանելով թէ՛օրին: Պ. Բօժէր յիշեցրեց նրան օրէնքի այն յօդուքը, որի հիման վրա կինը պարտաւոր է նազանդել իր մարդուն, և հրաժար-վում էր նրան փողեր տալ: Տիկինը Բօժէր ոսկերչին 3000 ֆրանկ արժողութիւն ունեցող աղանդակաւ կոճակներ պատուիրեց, և իր ամուսնուց փողերը վերցնելով, կոմունարներին տուց: Պ. Բօժէր փաղ-կեղ իրանց անգամ վճարեց: Մի քանի ժամանակից յետոյ սօցիալիստներին փող հարկաւորվեցաւ մէկ լրագիր հրատարակելու համար: Տիկինը Բօժէր ուժ-նաղար ֆրանկ արժողութեան շրթեր կապել տուց պարտքով, և պակասով ծախելով, տառաջած փո-ղերը սօցիալիստներին տուց: Նա մօտիկ յարա-բերութիւններ հաստատեց Լիսաբօնի, Ժուրիի և Վէրա Զատուլիէի հետ: Մի գեղեցիկ օր, իր մար-դու անբուր իրաւունքով, նա 150,000 ֆրանկի ար-ժէթիկին հանեց և մարդուց բաժանված սկսեց ապրել, ընդունելով իր մօտ սօցիալիստներին և նիշիլիստներին: Պ. Բօժէրի համար անուանելի էր

այդպիսի կնոջ հետ ապրելը և նա ցանկացաւ ա-պահարգան ստանալ: Այս օրերս դատարանը եր-կու կողմերին ևս ապահարգանի իրաւունք տուց:

«Gaulois» լրագիրը հետեւալ ծիծաղելի անէկ-զօտ է պատմում: Մարիկա Շ. վախճանամայ շատ օրինաւոր և հարուստ ծերունին, նկատեց որ այն նիւթերը, որոնցով նա ներկում էր իր մազերը և մօրուքը, նկարագրական սատարի ցաւ են պատճառում իրան: Նա վճռեց յանկարծակի ծերանալ: Նրա բարեկամները, տեսնելով նրան ծիւնի պէս սպիտակած, դարձանում էին նրա վրա: «Ինչ արած բարեկամներ, ասեց նրանք խորամանկ ծերունին, ևս աճալին փողեր կորցրի «Union générale» բանկում: Գուք հասկանում էք իմ ցաւ-ը. իմ մազերը և մօրուքը մէկ դիւրակայ մէջ բա-պիտակեցին:» Ահա ձեզ լրագրաւոր միտք: Նրա վրա ցաւում են, աշխատում են միթիթալել և ոչ զք պարտքով փող չէ վերցնում նրանից:

Ժողովրդական վերջին միօրագրութիւնից յայտն-վեցաւ, որ փարիզի բնակիչների թիւը 2,225,910 հոգուց է բաղկացած: 1876 թին փարիզում միայն 1,988,806 բնակիչներ կային. ուրեմն անցած հինգ տարիներում փարիզի ազգաբնակչութիւնը 235,104 մարդով աւելացաւ:

«Times» լրագրին Ֆիլադելֆիայից հեռագրում են յունվարի 20-ից հետեւեալ. «Կառավարութիւ-նը յայտնում է, որ անցեալ տարի Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներում եկել են 717,868 զաղթականներ: Գերմանիայից զաղթել են 248,323 մարդիկ, Անգլիայից և Վալիսից—77,750, Իրանդիայից—70,896, Շուտլանդիայից—16,441, Աւստրո-Ունգարիայից—19,667, Նորվե-գիայից—26,824, Շվեյցարիայից—55,805, Չինաստա-նից—20,628 և Կանադայից—94,159:»

ՄԵՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒՐ, 11 փետրվարի: «ПРАВДА. ВѢСТН.» լրագիրը յայտնում է, մոնցիւմ է նորաձե հազուստ գեներալ-ադիւտանտների և սկիտայի գեներալների համար, այն է ուսուց հազուստ՝ գլխարկները սպիտակ զարնամոր-թուց և բարձր կօշիկներ: Լրագիրները փե-տրվարի 11-ից հաղորդում են. իշխան Գօն-դուկով-Աօրսակով ուղեւորում է Բաթում և Սե ծովի եզերքը, իսկ Թիֆլիս կը հասնի մարտի 13-ին: Այնտեղ կը հաւաքվեն մի-նիստութիւնների ներկայացուցիչները գըլ-խաւոր կառավարչի իրաւունքները քննելու համար: Եւթաղարված է մայիսին մնա-ցած կովկասը այցելել: Նոր վարչութեան վերջնական նախագիծը կը քննվէ պետական խորհրդի մէջ: Կէպերները աշուրից դարձեալ նիստեր կունենան: Փետրվարի 11-ին մինիստրութեան եղբայրացութիւնը խմիչքների գործի մասին իմանալուց յետոյ, կը սկսեն դադիականական հարցը քննել: Փետրվարին Պետական խորհրդի մէջ կը քննվեն գեղաւցիները կրեդիտի և գործա-րանների մէջ աշխատողների ու արհեստա-ւորների երեխաների դրութեան բարեօրման հարցերը: Հերցեգովինցիները այրեցին Սե-տօկին Խովանովիչին ուղեւձ տալու համար:

Ս. ՊԵՏԵՐՈՒՐ, 11 փետրվարի: Պետական բանկի 5% տոմսը առաջին շրջանի արժէ 95 ռ. 25 Կ., երկրորդ 91 ռ. 25 Կ., երրորդ 91 ռ. 50 1/2 Կ., չորրորդ 91 ռ. 25 1/2 Կ., հինգերորդ 90 ռ., ներքին 5% առաջին փո-խառութեան տոմսը արժէ 217 ռ. 75 Կ., երկրորդ 216 ռ. 75 Կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսը արժէ 89 ռ. 87 1/2 Կ., երկրորդ 89 ռ. 87 Կ., երրորդ 89 ռ. 87 Կ., օսկի 8 ռ. 14 Կ.: Ռուսաց 1 բուրլ Լօնդոնի վրա արժէ 24,6 պէս, Ռուսաց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 205 մարկ 25 պֆ., փարիզի վրա 253 ֆրանկ 50 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը թիւղ է:

ԼՕՆԴՈՆ, 11 փետրվարի: Անգլիական բանկը փոքրացրեց դիսկոնտ:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԻՈՒՆԻ

